ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
/Խորհրդատվական ծառայություններ – Կազմակերպության ընտրություն – Խորհրդատուի Որակավորման վրա հիմնված ընտրություն /ԽՈԸ/

Հայաստանի Հանրապետություն
Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիր
Դրամաշնորհ՝ P152039

Ծրագրի անվանումը - **Տեխնիկական հսկողության և աջակցող խորհրդատու (ՏՀԱԽ**, Հղում **No. GEDP-CS-4/2015**

Սույն հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերը հետևում է ծրագրի գնումների ընդհանուր ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business-ում 2015թ. մարտի 12-ին:

Հայաստանի Հանրապետությունը ստացել է դրամաշնորհ Կլիմայի ներդրումների Հիմնադրամից Վերականգնվող Էներգետիկայի Ընդլայնումը ցածր եկամուտ ունեցող Երկրներում Ծրագրի շրջանակներում (ՎԷԸԾ) /կառավարվող Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի /ՎԶՄԲ/ կողմից/ Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրի ծախսերը հոգալու համար և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել սույն խորհրդատվական ծառայությունների մատուցմանը: Ծրագիրը իրականացվում է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից /ՀՎԷԷ Հ / Պատվիատու/:
Խորհրդատվական ծառայությունները /Ծառայություններ/ ներառում են՝

<u>Նպատակը</u>

ՀՎԷԷՀ-ն փնտրում է Տեխնիկական հսկողության և աջակցող խորհրդատուի՝ (ՏՀԱԽ) հորատման իրականացման ընթացքում տեխնիկական հսկողության իրականացման, հորատանցքի երկրաֆիզիկական և հորատանցքի գազային կարոտաժի, հոսքերի ստուգման արդյունքների և տվյալների վերանայման, հատույթների քիմիական վերլուծությունների, տեղանքի երկրաբանության տվյալների տրամադրման, ինչպես նաև առաջադրանքի հետ կապված այլ տեխնիկական խորհրդատվության և աջակցության տրամադրման նպատակով, այդ թվում հորատող կապալառուների հայտերի գնահատման և այլ մասնագիտացված պայմանագրերի համար:
Հաշվի առնելով երկրաջերմային համապատասխան փորձառության բացակայության առկայությունը Հայաստանում, ՀՎԷԷՀ-ն կվարձի ՏՀԱԽ-ի (մասնագիտացած երկրաջերմային հորատման ծրագրերի կառավարման մեջ), որը կապահովի անհրաժեշտ տեխնիկական, համակարգման և ծրագրի իրականացման աջակցություն՝ ժամանակին և ծախսարդյունավետ հորատում իրականացնելու նպատակով:

<u>Աշխատանքների շրջանակը</u>

Սույն առաջադրանքի շրջանակը սահմանափակվում է Երկրաջերմային Էներգիայի Հետախուզական Հորատման Ծրագրի (ԵԷՀՀԾ) I փուլով: Այն ներառում է մեկ կամ երկու նեղ հորատանքերի հորատում (3 ½ դյույմ գծային տրամագծով) Քարքարի երկրաջերմային տեղանքում՝1,200-1,500 մետր խորության վրա, և նպատակ ունի ստուգելու 500-1,000 մետրի վրա գտնվող ցածր դիմադրության շերտի բնույթը և չափելու այդ շերտի անմիջապես ներքևի հատվածի ջերմաստիճանը: Երկրորդ նեղ հորատանցքի հորատումը կմեկնարկի առաջին հորատանցքի հորատումից հետո, և կախված կլինի առաջին հորատանցքի հորատման արդյունքում ստացված եզրափակիչ տվյալներից, որոնք վերաբերում են խոստումնալից երկրաջերմային պաշարի առկայությանը: Երկու նեղ հորատանցքերի հորատման կոորդինատները ճշգրտվել են տեղանքում իրականացված հետախուզական աշխատանքների ընթացքում: Մանրամասներ կտրամադրվեն ՏԱ-ի մեջ:
ՏՀԱԽ -ի երկրաջերմային տեխնիկական թիմը կաջակցի Պատվիրատուին ԵԷՀՀԾ-ի առաջին փուլի իրականացման ընթացքում: Խորհրդատուն պետք է աշխատանքները սկսի վաղ փետրվարից կամ փետրվարի կեսերից: Հորատումը ակնկալվում է սկսել 2016 թ-ի հունիս-սեպտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում: ՏՀԱԽ -ն պետք է ունենա փորձագետների թիմ՝ բաղկացած տեղանքում հորատման գծով տեխնիկական հսկիչից, ջրամբարների/ռեզերվուարների գծով ճարտարագետից՝ հորատանցքերի փորձարկման փորձի առկայությամբ, հորատանցքերի երկրաբանից և երկրաքիմիկից: ՏՀԱԽ -ն կտրամադրի ընդհանուր ծրագրի համակարգումը և հորատման գործողությունների տեխնիկական կառավարումը, ինչպես նաև հորատանցքի ուսումնասիրության և վերլուծության մեկնաբանությունները: Խորհրդատուն կօժանդակի կառավարել Հորատման ծառայությունները իրականացնող ընկերության (ՀԾԻԸ) պայմանագիրը, և լրացուցիչ այլ պայմանագրեր, որոնք առընչվում են հորերի փորձարկման և կարոտաժի հետ:

ՀՎԷԷՀ-ն այժմ հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը Ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ իրենք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ Ծառայությունները մատուցելու համար:

Ընտրության չափորոշիչներն են՝

- Ընկերության փորձը երկրաջերմային հորատման ծրագրերի տեխնիկական հսկողության և հորատանցքերի փորձարկման ոլորտում, վերջին 10 տարիների ընթացքում /առավելագույնը 45 միավոր/;
- Ընկերության փորձը երկրաջերմային հորատման և հորատանցքերի փորձարկման և հորատման ու փորձարկման ընթացում հավաքված

տվյալների մեկնաբանման ոլորտում, վերջին 10 տարիների ընթացքում /առավելագույնը 45 միավոր/;

- Ընկերության համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձը Հայաստանում /առավելագույնը 10 միավոր/;

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Բանկի կողմից 2011թ. հունվարին հրատարակված Համաշխարհային Բանկի Ուղեցույցի 1.9 կետին՝ "Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում" /Խորհրդատուի ուղեցույց/, որը սահմանում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ: Խորհրդատուի ընտրությունը կատարվում է ըստ Համաշխարհային Բանկի՝ "Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում" Ուղեցույցում /հունվար 2011, վերանայված հուլիս 2014/ բերված ընթացակարգերի համաձայն:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ Համատեղ ձեռնարկատիրական գործունեության կամ ենթախորհրդատուի ձևով, որպեսզի ուժեղացնեն իրենց որակավորումները:

Խորհրդատուն ընտրվելու է համաձայն Խորհրդատուի Որակավորման վրա հիմնված ընտրություն /ԽՈԸ/ մեթոդի ինչպես նշված է Խորհրդատուների Ուղեցույցում:
Լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով 9:00-18:00 (տեղական ժամանակով):

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել թղթային տարբերակով կամ էլ-փոստով ստորև նշված հասցեով մինչև 2016թ. փետրվարի 09-ը, ժ. 18:00, (տեղական ժամանակով):

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11;
e-mail: g.zara@r2e2.am; info@r2e2.am; artgrigoryan@yahoo.com
Վեբ կայք՝ www.r2e2.am